

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի կառավարության միջև շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

կարևոր նշանակություն տալով շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության բնագավառում համագործակցության իրականացմանը և գործողությունների համակարգմանը,

համարելով, որ փոխշահավետ համագործակցության զարգացումը կնպաստի կայուն զարգացման և էկոլոգիական անվտանգության սկզբունքների ամրապնդմանը,

հաշվի առնելով ազգային օրենսդրությունների պահանջները, առկա պրակտիկան և միջազգային պարտավորությունները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը կիրականացնեն համագործակցություն՝ հիմնվելով հավասարության և շահերի փոխադարձաբար հարգման, քաղաքացիների՝ էկոլոգիապես բարենպաստ շրջակա միջավայրում առողջ ապրելակերպի իրավունքի պաշտպանության սկզբունքների վրա:

### Հոդված 2

Կողմերը ջանքեր կգործադրեն շրջակա միջավայրի վիճակի մոնիտորինգի (այդ թվում նաև՝ ռադիացիոն) ազգային համակարգերի և համապատասխան տվյալների տեղեկատվական բանկերի միջև փոխադարձ կապ հաստատելու նպատակով:

### Հոդված 3

Կողմերը կձգտեն շրջակա միջավայրի վիճակի որակի գնահատման և հսկողության միասնական մոտեցումների, չափանիշների, նորմատիվների, ստանդարտների, մեթոդների և ընթացակարգերի կիրառմանը:

### Հոդված 4

Կողմերը կհամագործակցեն շրջակա միջավայրի պահպանման գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների լուծման հարցում, այդ թվում՝ կլիմայի գլոբալ փոփոխության, օզոնային շերտի և կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրների հարցում:

#### Հոդված 5

Սոցիալ-տնտեսական կայուն զարգացում ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են համագործակցել ռեսուրսներ խնայող և էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների կատարելագործման, ներդրման, փոխանցման և ադապտացման բնագավառներում, անցկացնել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ, մշակել և իրագործել շրջակա միջավայրի պահպանության կարճաժամկետ և երկարաժամկետ համատեղ ծրագրեր:

#### Հոդված 6

Կողմերը կմշակեն և անհրաժեշտ միջոցներ կծեռնարկեն թռչունների և կաթնասունների միգրացվող տեսակների, ինչպես նաև նրանց ապրելավայրերի և միգրացիոն ուղիների պահպանությունն ապահովելու համար:

#### Հոդված 7

Կողմերը կհամագործակցեն անբարենպաստ անտրոպոգեն ազդեցության ենթարկված սահմանամերձ էկոհամակարգերի պահպանության և կարգավորման բնագավառում և միջոցներ կծեռնարկեն դրանց վերականգնման և կենսագործունեության ապահովման ուղղությամբ:

#### Հոդված 8

Կողմերը կհամագործակցեն անդրսահմանային էկոհամակարգերի կամ դրանց առանձին տեղամասերի առկայության վայրերում հատուկ պահպանվող գոտիների ստեղծման գործում՝ այդ գոտիներում Կողմերի կողմից տնտեսական գործունեության ռեժիմի հետագա մշակմամբ և համաձայնեցմամբ:

#### Հոդված 9

Հնարավոր անդրսահմանային ներգործությամբ տեխնածին վթարների, տարերային և այլ աղետների արդյունքում արտակարգ էկոլոգիական իրավիճակներ առաջանալու դեպքում Կողմերը պարտավորվում են օպերատիվորեն տեղեկացնել միմյանց, ինչպես նաև ձեռնարկել դրանց հետևանքների վերացման համատեղ անհետաձգելի միջոցներ:

#### Հոդված 10

Անդրսահմանային փոխադրումների էկոլոգիական ասպեկտների կարգավորման նպատակով Կողմերը պարտավորվում են համակարգել գործողությունները իրենց ազգային օրենսդրություններին և միջազգային պարտավորություններին համապատասխան՝

բնական ռեսուրսների (օգտակար հանածոների, անտառանյութի, բուժիչ բուսական հումքի, կենդանիների, դրանց առանձին մասերի և կենսագործունեության արգասիքների) անդրսահմանային փոխադրումներ իրականացնելիս,

վտանգավոր բեռների, թափոնների և երկրորդային հումքային նյութերի անդրսահմանային փոխադրումներ իրականացնելիս,

անհետացման եզրին գտնվող բույսերի, կենդանիների, թռչունների տարբեր տեսակների, դրանց մասերի կամ կենսագործունեության արգասիքների անդրսահմանային փոխադրումներ իրականացնելիս:

#### Հոդված 11

Կողմերը պարտավորվում են հանդես գալ համատեղ բնապահպանական նախաձեռնությամբ հարակից երկրների և համաշխարհային հանրության առջև, անցկացնել համատեղ խորհրդակցություններ միջազգային կազմակերպությունների շրջանակներում ընդունված էկոլոգիական ծրագրերի և նախագծերի իրագործման համար:

#### Հոդված 12

Կողմերը փոխադարձ կապերի զարգացման և ամրապնդման նպատակով կփոխանակեն տեղեկություն շրջակա միջավայրի պահպանության բնագավառում:

#### Հոդված 13

Կողմերը պարտավորվում են համագործակցել կադրերի էկոլոգիական դաստիարակության, կրթության, որակավորման

բարձրացման և հասարակայնության հետ աշխատանքների բնագավառում: Այդ նպատակով նրանք իրականացնում են փորձի փոխանակում, անցկացնում են համատեղ սեմինարներ, գիտաժողովներ, անձնակազմի ուսուցում:

#### Հոդված 14

Կողմերը կազմակերպում են կանոնավոր հանդիպումներ սույն Համաձայնագրի կատարման համար պատասխանատու իրավասու մարմինների ղեկավարների մակարդակով, անցկացնում են համատեղ փորձագիտական խորհրդակցական աշխատանքներ սույն Համաձայնագրի դրույթներից բխող աշխատանքների կազմակերպման և կատարման ուղղությամբ համաձայնեցված որոշումներ կայացնելու, համագործակցության ծրագրերի և պլանների իրագործման, այդ ուղղությամբ աշխատանքների վիճակի վերլուծության կատարման նպատակով:

#### Հոդված 15

Սույն Համաձայնագրի դրույթները դրա գործողության ընթացքում կարող են լրացվել կամ փոփոխվել Կողմերի համաձայնությամբ: Այդ լրացումները և փոփոխությունները ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 18-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

#### Հոդված 16

Սույն Համաձայնագրի կատարման համար պատասխանատու իրավասու մարմիններն են՝

Հայաստանի Հանրապետությունում՝ բնապահպանության նախարարությունը,

Վրաստանում՝ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների պահպանության նախարարությունը:

#### Հոդված 17

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ երրորդ երկրների հետ կնքած համաձայնագրերից բխող իրավունքները և պարտավորությունները:

#### Հոդված 18

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարումը հաստատող Կողմերի վերջին ծանուցման պահից և կգործի հինգ տարվա ընթացքում:

Համաձայնագրի գործողությունը ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով, եթե Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ Կողմերից ոչ մեկը մյուս Կողմին չծանուցի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 1997 թվականի մայիսի 3-ին, երկու բնօրինակով, հայերեն, վրացերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման նպատակով ռուսերեն տեքստը ունի գերակայություն:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի նոյեմբերի 30-ից: